

## ՀԱՅԿԱԿԱՆ ՌՈՄԱՆՏԻԶՄԻ ՆԱԽԱԿԱՐԱԴԵՏԸ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱԳԱՆ

Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԳՊՀ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ  
e-mail: vachik\_grigoryan@mail.ru

**Անգնահատելի է Ղևոնդ Ալիշանի դերը հայկական մշակույթի զարգացման գործում: Նրա երկերը շատ հեղափոխողների համար ունեն սկզբնաղբյուրի նշանակություն:**

Ալիշանի հայրենասիրական քնարը նշանակալի դեր խաղաց հայ գրականության ձևավորման գործընթացում: Դուրս բերելով Մխիթարյանների դպրոցի կլասիցիզմի պոեզիան ընդունված կանոնների սահմաններից՝ նա բանաստեղծությունը օժտեց ռոմանտիզմի նրբագեղությամբ: «Պլպուլն Ավարայրի», «Շուշանն Շավարշանա» պոեմներն էլ ավելի ամրապնդեցին ռոմանտիզմի դիրքերը Մխիթարյանների պոեզիայում:

Ռոմանտիզմի ոգով ներծծված նրա ստեղծագործությունները դարձան նոր հանգրվան, իսկ Ալիշանն ինքը դարձավ հայ նոր պոեզիայի հենակետը, որն էլ կանխորոշեց հայ պոեզիայի հետագա ընթացքը ի դեմս Պեշկյառյանի, Դուրյանի, Պարկանյանի:

**Բանալի բառեր՝** կլասիցիզմ, ռոմանտիզմ, հեղափոխություն, մատենագրություն, հավատարմություն, բանաստեղծական կառույց, քաղաքացու դաստիարակում, միֆական, աշխարհաբար, պատմական Հայաստան:

Ռոմանտիզմը՝ որպես գրական ուղղություն, եվրոպական գրականության մեջ ձևավորվեց 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի առաջին կեսին: Դրան մեծապես նպաստեց 18-րդ դարում լայն տարածում ստացած սենտիմենտալիզմ գրական հոսանքը: Եվրոպական ռոմանտիզմի համար հող նախապատրաստեց ֆրանսիական մեծ հեղափոխությունը, ռուսականի համար՝ 1812-ի Հայրենական պատերազմը և դեկաբրիստների ապստամբությունը 1825-ին, հայ գրականության համար՝ 1828-ին պարսկական լծից Արևելյան Հայաստանի ազատագրումը:

Հովհաննես Թումանյանը, խոսելով հայ գրականության մեջ բնաշխարհիկ և տարաշխարհիկ գրողների մասին, վերջիններիս շարքում առաջինը հիշատակում է Ղևոնդ Ալիշանին: Հայրենիքից հեռու, նրա կարոտով մշտապես վառվող բանաստեղծը վանականի խցում արարեց հսկայածավալ գիտական, գեղարվեստական երկեր, որոնք դարձան հայ գրականության, հայագիտության պարծանքը:

Այսուհանդերձ, ինչպես նկատում է Օշականը, «Գրականություն մը միշտ ժողովուրդ մըն է»: Հենց այդ ժողովուրդն է, որ պակասում է նրա գրականության մեջ այն-

պես, ինչպես որ այդ ժողովուրդը պակասում է մեր մատենագրության մեջ առհասարակ:

Բայց սա չէր միայն բարդություն առաջացնող հանգամանքը. գրաբարի գործադրումը եթե շատ կողմերով տպավորիչ ու հանդիսավոր էր դարձնում խոսքը, շատ կողմերով էլ խանգարում էր: Բանն այն է, որ Ալիշանն իր ողջ տաղանդի զորությամբ ու նաև զգացողություններով գալիս էր գրքերից, այն ամենից, ինչը ավանդված էր դարերով: «Ալիշանն ապրեց մեր պատմության մեջ և Վենետիկում», նա եթե վերադառնար Պոլիս, գուցե միանգամայն այլ լիներ նրա գրական ճակատագիրը, ինչպես որ դա եղավ Ծերենցի, Պեշկեթաշյանի պարագայում: Դեռ երեսուն տարեկանում գրեթե ամբողջությամբ սպառել էր մեր մատենագրության ուսումնասիրությունը: Եվ այս իմաստով էլ Ալիշանը լավագույնս ներկայացնում էր Մխիթարյան դասը. նրանք գիտեին «ամեն ինչ», եթե խոսքը վերաբերում էր մեր մատենագրությանը, անցյալի պատմական հիշատակներին: Ահա այս վերին աստիճանի հավատարմությունը մեր պատմությանը հնարավորություն չափտի տալին Ալիշանին բանաստեղծության մեջ այն թռիչքն արձանագրելու, ինչը որ հետագայում նկատում ենք Դուրյանի պարագայում: Եթե վերջինիս կենդանության օրոք նրան որպես բանաստեղծ չէին էլ ճանաչում, Ալիշանի փառքը տարածված էր ամենուր: Նահապետի մահից հետո էլ նրա ստեղծագործության մասին խոսում էին պատկառանքով, սակայն մեր բանաստեղծության ընթացքի վրա Ալիշանի ազդեցությունն զգալի չափով նվազ էր Դուրյանի՝ առանց տարիների նախապատրաստության, տառապանքով ծնված բանաստեղծության համեմատ: Դժվար է Ալիշանի բանաստեղծության մեջ անհատական ապրումների հորձանք տեսնել, այստեղ դրանք իրենց սահմաններն ունեն, ամեն ինչ հաշվարկված է, նույնիսկ հույզը որոշակի սահմաններում է արտահայտվում: Ինչու՞: Որովհետև այն, ինչի մասին որ նա պատմում է կամ վիպում, արդեն ասվել է ուրիշների կողմից և այստեղ բացահայտումների մասին խոսելը այնքան էլ տեղին չէ:

Ընդհանրապես Ալիշանի պոեզիան չի առանձնանում երևակայության ինքնատիպ, երևոյթները նորովի բացահայտող ուժով, քանի որ ներկայացվող գաղափարները և պատմությունը սկզբից ևեթ ունեն իրենց ավարտուն, վերջակետվող տրամաբանությունը, անակնկալները գրեթե բացառվում են, հետևապես երևակայությունն արդեն սահմանագծված տարածությունը բնորոշումներով, համեմատություններով ծանրաբեռնելն է: Այս ամենը գրված է մտքի ուժով, հետևապես զգացմունքը, երևակայությունը մեծ չափով պայմանավորված են այս կարգի բանաստեղծական կառույցով: Հայրենասիրության, բնության պատկերները նրան հուզում են դասական հովերով, արդեն ասված, արդեն չափագրված պատկերներով: Դրանք եթե կարելի է ընդհանուր կերպով բնութագրել, ապա պետք է ասել, թե արդեն հավանության արժանացած, ընդհանուր գաղափարներ ու պատկերներ են՝ անհատական որոշակի կրքով, տաղանդով շաղխված:

Այնուամենայնիվ, անկարելի է չտեսնել անհատական տաղանդի այն առանձին որակները, որոնք Ալիշանին տարբերում են իր նախորդներից: Խոսքը մասնավորա-

պես վերաբերում է կլասիցիստ հեղինակներին: Եվ այստեղ է, որ Ալիշանը մեր պոեզիայի համար գծում է նոր սահման:

Խոսքն առավելապես տպավորիչ է այն բանաստեղծություններում, որտեղ կարևորվում է անհատականը, զգացմունքի, երևոյթները հայելու այն ինքնությունը, որ բնորոշ է այս հեղինակին: Երբեք չի կարելի անտեսել այն հանգամանքը, որ Ալիշանը Վենետիկում էր, Մխիթարյան միաբանության անդամ, բնականաբար Հռոմը նրա վրա իր մշակույթով, պատմությամբ, կրոնով չէր կարող չազդել: Եվ դա զգալի է Մխիթարյան միաբանության բոլոր անդամների մոտ անխտիր: Նաև Ալիշանի պոեզիայում: Բայց որքան էլ արտաքին մշակույթն իր դասական ոճով, հանդիսավորությամբ ու նաև հրապարակախոսական կրքով ազդեր Ալիշանի վրա, միևնույն է՝ նրա զգացողությունների ծալքերում կենդանի էր էջմիածինը: Ահա այստեղ է, որ Ալիշանը չէր դառնում սովորական բանաստեղծ :

Գրողի պոեզիան ամփոփված է «Նուագք», ժողովածուի մեջ՝ «Մանկունի»՝ հատոր առաջին, «Մաղթունի» և «Բնունի»՝ հատոր երկրորդ, «Հայրունի»՝ հատոր երրորդ, «Տերունի»՝ հատոր չորրորդ, «Տխրունի»՝ հատոր հինգերորդ: Ակնհայտ է, որ շարքերի վերնագրերը՝ միևնույն հանգով լավագույնս վկայում են Մխիթարյան հայրերի պոեզիայում տարածված հոեւորական, հանազավորման արվեստի մասին:

Եթե ուշադրությամբ հետևենք բանաստեղծի մտքի զարգացման ընթացքին, ապա կնկատենք, որ բանաստեղծ-մանկավարժի հիմնական նպատակը **հայրենասավեր քաղաքացու** դաստիարակումն է: «Ուր քաղաքացիներ չկան, չկա և հայրենիք», - ասում է Ալիշանը: Սա հայ մեծ մտավորականի ամենակարևոր եզրահանգումն է, որտեղ առաջին պլան է մղվում երկրի քաղաքացու անհատական պատասխանատվության հարցը, այսօր էլ այս պահանջը մնում է արդիական, և դա արդիական է լինելու նաև ապագայում: Հայրենիքի գոյությունը հայրենասերների գոյությամբ է պայմանավորված: Գրողն անցյալի հերոսական օրինակները համարում է միանգամայն անտեղի ու ավելորդ, եթե մարդիկ այդ հերոսների օրինակով սեփական առաքինությունները չվաստակեն:

«Հայրունի» հատորում ներկայացված հայրենասիրական բանաստեղծությունները նվիրված են պատմական դեմքերին՝ «Ի Հայկն և ի բաստ հայկազանց», «Ի մահ Տրդատայ ահեղազօրն արքայի հայոց», «Ճակատամարտ Ձիրաայ և քաջակրոն Մուշեղ», «Նահատակութիւն սրբոց Ղևոնդեանց» և այլն:

«Երգք Նահապետի» բանաստեղծաշարը /1847-1850/ ժամանակին լայն տարածում գտավ: Այստեղ ընդամենը տասնմեկ անուն աշխարհաբար գործեր են, բայց դրանք նշանավորեցին ռոմանտիզմի հաղթանակը հայ պոեզիայում: Ազգային-ազատագրական ոգին, որ ծնվեց Ալիշանի երգերում, իր հետևորդներն ունեցավ՝ Պեշիկթաշլյան, Պատկանյան, Շահագիզ: Հայրենասիրական բանաստեղծություններն ամփոփված են «Նուագք» երրորդ հատորում՝ «Հայրունի» խորագրի տակ: Ալիշանի ստեղծագործության յուրահատակությունը լավ է ըմբռնել Դանիել Վարուժանը . «Ալիշան բանաստեղծ էր, որ գիտություն կրներ: Այս կնշանակե թե գիտությունը կը

ժողովրդականացներ: Իր թանգարանին, իր մագաղաթներու մատենադարանին և առհասարակ հայրենի բոլոր ավերակներուն մենությանը վերև կախուած էր իր հսկայական տավիղը, և ահա Խորենացիի խոսքը երգի կփոխեր, Եղիշեի աղաղակը՝ դյուցազներգության, Եզնիկի մտածումը՝ երևակայության, Շնորհալիի աղօթքը՝ օրհներգության, ավերակներու տրտմությունը՝ արցունքի և անցյալի նշույլը՝ հրդեհի» /Դ. Վարուժան, Երկեր, Ե., 1946, էջ 356/: Ուղղակի իմաստով նա գիտությունը ծառայեցնում էր բանաստեղծությանը, այստեղ արդեն ենթակա չէր մնում կլասիցիստական ռացիոնալիզմին: Վերջինիս պոետիկան կաշկանդում էր ազատ հույզերի արտահայտմանը, ուստի և Ա. Տերտերյանի վկայությամբ՝ Ալիշանը նախընտրեց «ռոմանտիզմի ազատասեր արվեստը»:

Բանաստեղծն սկզբում խուսափել է հեղինակ ճանաչվելուց: Քերթվածները նախապես տպագրել է որպես միջնադարյան գուսանական երգեր, քանի որ գրված էին աշխարհաբարով ու նաև որոշակի քաղաքական միտումներ էին արտահայտում:

«Ազգային ինքնաճանաչման գաղափարը «Նահապետի երգեր»-ի հիմնական բովանդակությունն ու պաթոսն է<sup>1)</sup>»: Մեր ժողովրդի հարուստ պատմությունը, հոգևոր ու նյութական մշակույթը գրողի համար հպարտության, սիրո աղբյուր են: Հայրենքին այլևս վերացական հասկացություն չէ, ինչպես կլասիցիստական գրականության մեջ, այն դարձել է մարդկային էություն՝ ջերմ, հարազատ ու սիրելի: Հայրենիքի ճակատագիրը դառնում է մարդու ճակատագիրը: Կլասիցիստական վերերկրային, միֆական, աստվածային հայրենիքը, որտեղ սովորական մահկանացուն անկարող էր ոտք դնել, հանկարծ նոր իրադրության մեջ Ալիշանի ջանքերով դառնում էր անմիջական ու առինքնող, մարդը դառնում էր հայրենիքի ցավերի, ուրախության, կարոտի կրողը, հայրենիքը դառնում առավել մերձ, առավել շոշափելի, հետևապես խնամքի, հոգացության կարոտ: Այս իմաստով հայ մեծ մտավորականի պոեզիան բնույթով ավելի գործնական էր, քան նախորդների միֆական, առասպելական ոլորտներում կայացած հայրենիքը, որ շատ քիչ ընդհանրություն ուներ ներկայի հետ, եթե չասենք՝ ընդհանրապես կապ չուներ:

Ալիշանը երբեք իր հայրենիքը չտեսավ: Հայրենիքը գեղարվեստական տարազ էր հագնում բացառապես պատմական իրողությունների հիմքի վրա: Այս հանգամանքը պայմանավորում էր ներքին հակասություններից զերծ բովանդակությամբ բանաստեղծություն: Եթե կան հակասություններ, ապա դրանք միանգամայն ընկալելի են: Աստվածաբանական նախասահմանությունն ամեն ինչ է ներառում իր մեջ, հետևապես նրա համար ամեն ինչ կանխատեսելի է՝ փառավոր անցյալ, ավերակված ներկա, լուսավոր գալիք: Դեպի լուսավորը, դեպի կատարյալն ու առավել ամբողջականն ընթանալու գործընթացն Ալիշանի համար անխուսափելի է, այստեղ հետընթաց, գլորալ առումով, պարզապես չի կարող լինել: Ամեն ինչ Արարչի ձեռքում է. «Այլ ինչ ամիսոսամ ըզքեզ Հայաստան... Ինքն է հրամայած քակել, ինք շինէ»:

«Հայոց աշխարհիկ», «Հրազդան», «Հայ հայրենիք» երգերում հայրենասիրության թեման միահյուսվում է պանդխտության թեմային: «Հրազդան» բանաստեղծության

ազդեցությամբ գրվեցին Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուքը», Րաֆֆու «Ձայն տուր, ո՛վ ծովակ»-ը:

1848-ի հեղափոխության ալիքը ցնցեց Իտալիան: Բազմաթիվ են ժողովրդին սխրանքի կոչող երգերը: Բայց դրանց փառապսակը «Բա՛մ փորոտան»-ն է: Ռոմանտիկ գրողը համոզված է, որ մի օր էլ ազատության ղողանջները իր հայրենիքում կլսվեն, ուստի և ստեղծեց ապագայի քայլերգը:

Ալիշանը երկու պոեմ ունի՝ «Պլպուլն Ավարայրի», «Շուշանն Շավարշանա»: Դրանցով ամրապնդվեց ռոմանտիզմը Մխիթարյանների պոեզիայում:

Ալիշանը հաղթահարեց կլասիցիզմի սահմանփակումները և ռոմանտիկական շնչով գրված երգերով դարձավ հայ նոր բանաստեղծության ռահմիթրան՝ ունենալով այնպիսի հետևորդներ, ինչպիսիք են Պեշկիթաշլյանը, Դուրյանը, Պատկանյանը և ուրիշներ:

Ալիշանն իր ուժերը փորձել է և արձակում՝ «Յուշիկք հայրենեաց հայոց»/1869-70/: Նահապետը՝ որպես մի Վիրգիլիոս, ուղեկցում է Հայկակին՝ երթից առաջ երիտասարդին ներարկելով հայրենիքի գաղափարը: Հետագայում երևույթների մատուցման այս կերպը գործադրեցին Չարենցն ու Շիրազն իրենց պոեմներում / «Մահվան տեսիլ», «Հայոց դանթեականը»/:

Մինչ աշխարհաբարով կիրապարակեր իր երգերը, Ալիշանը հետաքրքրվում էր ժողովրդական բանավեստով: Վենետիկի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի մատենադարաններում գրչագիր մատյաններից հավաքելով ժողովրդական երգերը՝ 1852-ին հրատարակեց «Հայոց երգք ռամկականք» խորագրով: Այս երգերի մեջ էին «Կոունկը», «Երգ կաքավուն», «Երգ արագիլին», «Մանուկն ու ջուրը», որոնց անհետացումից փրկելն արդեն անգնահատելի ծառայություն էր մեր ժողովրդի համար:

Ալիշանը տիրապետել է մի շարք ասիական ու եվրոպական լեզուների, կատարել է թարգմանություններ, օրինակ՝ Զ. Միլտոնի «Դրախտ Կորուսյալ»-ը/հատված, «Ծաղկաքաղ քերդողաց Անգրիացոց», 1852/, Զ. Բայրոնի «Իտալիա»-ն / «Չայլո Հարոլդ» պոեմի չորրորդ երգը, 1860/, Ֆ. Շիլլերի «Երգ ի զանգակն» /1871/, Հ. Լոնգֆելլոյի «Հնձողն և ծաղկունք»-ը /«Քնար Ամերիկյան», 1874/:

Ալիշանի գրիչը բեղմնավոր էր հայոց պատմության, հնագիտության, աշխարհագրության, մշակույթի ոլորտներում: Գիտնականը նախատեսել էր 20-22 մեծադիր հատորներում ներկայացնել պատմական Հայաստանի տասնհինգ նահանգների պատմաաշխարհագրական նկարագրությունը: Շարքի կոթողային գործերից են՝ «Շիրակ» /1881/, «Սիսուան և Լևոն Մեծագործ» /1885/, «Այրարատ» /1890/, «Սիսական» /1893/ աշխատությունները:

«Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք հայոց»/1895/ ուսումնասիրության մեջ քննվում են հայկական հեթանոսության ակունքները և այլն:

Ալիշանի գիտական ժառանգությունը /45 հատոր/ մեծապես նպաստել է հայրենի գիտության զարգացմանը:

## THE FORERUNNER OF ARMENIAN ROMANTICISM

GRIGORYAN VACHAGAN

*Doctor of Philology, Professor*

*The Head of the Chair of Armenian Language and Literature, GSU*

The role of Ghevond Alishan in the development of Armenian culture is invaluable.

His research in various fields today is of primary importance to many researchers.

With his eloquent patriotic lyricism, Alishan greatly contributed to the development of Armenian literature. Bringing the classicist poetry of the Mkhitarian's Congregation beyond the accepted rules he developed the aesthetics of romanticism. Alishan's "Plpul of Avarayr" and "Shushan Shavarshana" poems better reinforced the aesthetics of romanticism in the Mkhitaryans' poetry.

With his romantic songs, Alishan became the pioneer of new Armenian poetry, having followers like Peshiktashlyan, Duryan, Patkanyan.

**Keywords:** *classicism, romanticism, revolution, bibliography, loyalty, poetic structure, citizen upbringing, mythical, new Armenian, historical Armenia.*

## ОСНОВОПОЛОЖНИК АРМЯНСКОГО РОМАНТИЗМА

ГРИГОРЯН ВАЧАГАН

*Доктор филологических наук, профессор,*

*Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ*

Неоценим вклад Гевонда Алишана в деле развития армянской культуры. Его труды по ряду проблем для многих исследователей имеют значение первоисточника.

Проникновенная патриотическая лира Алишана – это знаковый период в процессе становления армянской литературы. Выведя поэзию классицизма Школы Мхитаристов за рамки принятых канонов, он таким образом актуализовал изящество романтизма. Поэмы Алишана “Соловей Аварайрский”, «Шаваршанова лилия» еще более укрепили изящную стезю романтизма в поэзии мхитаристов. Пронизанные духом романтизма его произведения явились новой вехой, а сам Алишан стал оплотом для новой армянской поэзии в лице своих блистательных последователей – Пешикташляна, Дуряна, Патканяна.

**Ключевые слова:** *классицизм, романтизм, революция, библиография, верность, поэтическая структура, воспитание граждан, мифическая, светская, историческая Армения.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 30.01.2020թ.:

Հոդվածը գրախոսվել է 04.06.2020.թ.: